

**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
-----------	------------------

ԱՄԲԻՈՆ	ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՆՐԱ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ
--------	---

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՄՈԴՈՒԼ	ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
-------------------------------------	-------------------------

ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ ԵՎ ՄՈԴՈՒԼՆԵՐԻ ՔԱՆԱԿ	1708B4/15
------------------------------------	-----------

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
-----------------	------------------------------

ԿՈՒՐՍ / ԿԻՍԱՄՅԱԿ	3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
------------------	---------------------------

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

- Շարադրել հայոց լեզվի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը,
- ժամանակագրական հաջորդականությամբ տալ հայերենի՝ որպես հայ հասարակության հաղորդակցման միջոցի, ամբողջական պատմությունը,
- ուսանողներին գիտելիքներ հաղորդել հայերենի ծագման, նրա պատմական զարգացման շրջանների մասին,
- նկարագրել դրանցում հայերենի ունեցած որակական վիճակների /գրաբար, միջին հայերեն, արդի հայերեն/ հիմնական առանձնահատկությունները
- պատկերացում տալ միջին գրական հայերենի հնչյունական, բառապաշարային, բառակազմական և քերականական իրողությունների մասին
- բացահայտել ազգային լեզվի ձևավորման նախադրյալները, հայ քաղաքական հոսանքների դերը ազգային լեզվի մշակման ուղիների հարցում /գրապայքար/,
- պատկերացում տալ արևմտահայ և արևելահայ գրական աշխարհաբարների զարգացման ընթացքի տարբերությունների և ինքնատիպությունների մասին
- կարևորել խորհրդային շրջանի դերը արդի հայ գրական լեզվի զարգացման և մշակման գործում:

ԿՐԹԱԿԱՆ ԿԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- ԳԻՏԵԼԻՔ .**
- ներկայացնել հայերենի ծագման, ցեղակցության, բնույթի ու հետագա ձևափոխությունների գիտական պատմությունը
 - ճանաչել այդ պատմության ընթացքում հայերենի կրած հիմնական որակական փոփոխությունները
 - բացատրել լեզվական մի վիճակից մյուսին անցման պատմական, քաղաքական ու մշակութային նախա - դրյալները
 - բնութագրել հայերենի բարբառները և դասակարգել դրանք ընդունված սկզբունքներով
- ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ.**
- հասկանալ եւ բացատրել լեզվի պատմական զարգացման անհրաժեշտությունը, հայոց լեզվի եւ հայ ժողովրդի պատմության օրգանական կապը, լեզվի դերը որպես հասարակական հաղորդակցման միջոցի
 - ունենալ հայերենի պատմությունը ըմբռնելու, պատմական իրադարձությունները վերլուծելու կարողություն

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ.
- Տիրապետել հայոց լեզվի ծագման եւ զարգացման մասին գոյություն ունեցող տեսություններին, հայերենի պատմական շրջանաբաժանման սկզբունքներին, հին, միջին եւ արդի գրական հայերենների հնչյունական, բառային եւ քերականական ընդհանրություններին, կառուցվածքային հիմնական տարբերություններին
- Տիրապետել հայերենի պատմությունը ճշտիվ մեկնաբանելու եւ շարադրելու հմտություններին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՆԿԱՐԱԳԻՐ

ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՔԱՆԱԿ՝ 4 կրեդիտ
ԼՍԱՐԱՅԻՆ ԺԱՄ՝ 48 ժամ
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ 24 ժամ
ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ՝ 24 ժամ
ՇԱԲԱԹԱԿԱՆ ԺԱՄԵՐ՝ 4 ժամ

ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Նախնական գիտելիքներ հայերենի պատմության մասին՝ ավագ դպրոցի չափորոշիչներին համապատասխան:

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐ

Դասախոսություն, զրույց
ինքնուրույն, անհատական եւ խմբային աշխատանք

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Լեզուների պատմության ընդհանուր հարցեր, ուսումնասիրության մեթոդներ,
 - 1.1 Հասկացություն լեզվի պատմական զարգացման մասին
2. Տեսություններ հայերենի ծագման, կազմավորման, բնույթի, նրա նախագրային վիճակի մասին:
3. Մաշտոցյան գիրը՝ որպես հայերենի հազարամյակների պատմության սահմանաբաժան:
 - 3.1. Հայոց գրերի գյուտը պատմաքաղաքական նշանակությունը: Լեզվի պատմության անգիր և գրավոր փուլեր:
4. Հայերենի գրավոր պատմության հին շրջանի /5-12-րդ դդ/ գրական լեզուն.
 - 4.1. Գրաբարի հնչյունական ու քերականական համակարգերի և բառապաշարային առանձնահատկություններով, բառակազմական դրսևորումներով
 - 4.2. Հին հայերենի հարստացման ու մշակման փորձեր /հունաբան հայերեն/:
 - 4.3. Այս շրջանում հայերենի բարբառների գոյության փաստարկումը:
5. Կիլիկյան հայերենը որպես հայոց լեզվի պատմության միջին շրջանի /13-16-րդ դդ./ գրական լեզու՝ իր հնչյունական ու քերականական համակարգերի և բառապաշարային առանձնահատկություններով, բառակազմական հիմնական դրսևորումներով, պետական լեզվի իր գործառնությունը:
 - 5.1. Հայերենի նոր շրջանի բարբառների առաջացումը, դրանց դասակարգման սկզբունքները:
 - 5.2. Լեզվամշակման նոր փորձերը. Լատինաբան հայերեն
6. Ժամանակակից հայոց լեզուն որպես հայերենի գրավոր փուլի նոր շրջանի /17-րդ դդ.-մեր օրերը/ գրական լեզու:
 - 6.1. Աշխարհաբարը 17-19-րդ դդ., երկճյուղ աշխարհաբար, գրապայքարը և հայոց ազգային լեզվի կազմավորումն ու մշակումը:

6.2. Արդի հայերենի հնչյունական համակարգը, քերականական կառուցվածքը, բառապաշարը և բառակազմական միջոցները:
 6.3. Արդի հայերենը խորհրդային և հետխորհրդային շրջաններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
 ՀԻՄՆԱԿԱՆ

1. Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Եր., 2006, 426 էջ:
 2. Ս. Ղազարյան, Հայ գրական լեզվի պատմություն Եր., 1978, 412 էջ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ

1. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ.1,2 Եր., 1972
 2. Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն /նախագրային շրջան/, Եր., 1998

ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Գրավոր ստուգում,
 ընթացիկ գրավոր ստուգում
 անհատական աշխատանք
 Նախատեսված են մեկական ստուգողական եւ անհատական աշխատանքներ՝ յուրաքանչյուրը՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Ամփոփիչ ստուգումը գրավոր է՝ 100 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ երկու 30 և մեկ 40 միավորային արժեքով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ
 ԲԱՂԱԴՐՈՒԹՅՆԵՐ ԵՎ
 ԿՇԻՌ

1. Բաղադրիչ 1՝ 10 /հաճախումներ/,
 2. Բաղադրիչ 2՝ 20 /ընթացիկ ստուգում /,
 3. Բաղադրիչ 3՝ 20 / անհատական աշխատանք/,
 4. Բաղադրիչ 4՝ 40 /ամփոփիչ ստուգում/
 5. Բաղադրիչ 5՝ 10 /ընթացիկ ակտիվություն/

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

Գնահատման թվային միավորը	Տառային գնահատական	Գնահատականի պաշտոնական թվային համարժեքը
96-100	A+	5+
91-95	A	5
86-90	A-	5-
81-85	B+	4+
76-80	B	4
71-75	B-	4-
66-70	C+	3+
61-65	C	3
40-60	C-	3-
Մինչև 39	D	2

**Ուսանողի ծանրաբեռնվածության աշխատաժամանակը
կրեդիտ / կրեդիտ ժամ՝ 4/120**

Հ/Հ	Թեմա	Լսարանային ժամեր			Ուսանողի ինքնուրույն աշխատա- ժամանակը	Ուսանողի ընդհանուր աշխատա- ժամանակը
		Դաս	Մեմ	գործ		
1.	Հայոց լեզվի պատմությունը որպես գիտաճյուղ. դասընթացի առարկան խնդիրները եւ նպատակը: Լեզվի ուսումնասիրման մեթոդներ, լեզվի զարգացում	2			4	6
2.	Հայերենի ծագման, կազմավորման, բնույթի եւ նրա նախագրային վիճակի մասին		2		2	4
3.	Հին գրական հայերենի հնչյունական համակարգը	2			4	6
4.	Մաշտոցյան գիր. հայոց գրերի գյուտը, 5-րդ դարի հայ գրականության նշանավոր երկերը		2		2	4
5.	Հին գրական հայերենի բառային համակարգը	2			4	6
6.	Հին գրական հայերենի քերականական համակարգը		2		2	4
7.	Հին գրական հայերենի քերականական համակարգը		2		2	4
8.	Հայերենի բարբառները 5-րդ դարում	2			4	6
9.	Հունարան հայերենի քերականական դպրոցը հայերենի պատմության մեջ		2		2	4
10.	Գրաբարը 6-10 և 10-16-րդ դարերում		2		2	4
11.	Հայերենի գրավոր պատմության հին շրջանի հիմնական առանձնահատկությունները		2		4	6
12.	Հայերենի գրավոր պատմության միջին շրջան. Միջին գրական հայերենի կազմավորումը: Միջնադարյան հայ գրականության տեսակների լեզվական առանձնահատկությունները	2			2	4
13.	Միջին գրական հայերենի հնչյունական համակարգը	2			2	4
14.	Անուն խոսքի մասերը միջին հայերենում, գոյականի և դերանվան հոլովումը	2			2	4
15.	Միջին գրական հայերեն. կազմավորումը, հնչյունական կազմի առանձնահատկությունները: Գոյականի քերականական կարգերը: Հոլով և հոլովում		2		4	6
16.	Միջին հայերենի ածական եւ թվական անունները, դերանունը		2		2	4

17.	Բայի խոնարհումը միջին հայերենում	2			2	4
18.	Բայի խոնարհման՝ գրաբարից տարբերվող իրողությունները ՄՀ-ում		2		2	4
19.	ՄՀ-ի շարահյուսական իրողությունները եւ բառային կազմը		2		2	4
20.	Միջին հայերենը պետական լեզու	2			2	4
21.	Հայ տպագրությունը. Գրաբարի մշակման նոր փորձեր	2			2	4
22.	Հայերենի բարբառների դասակարգման հարցերը	2			2	4
23.	Հայոց ազգային լեզվի կազմավորումը. պայքար նրա մշակման ուղիների համար		2		2	4
24.	Ժամանակակից հայերենի համակարգը. Լեզվի հնչյունական, բառային և քերականական կառուցվածքներ	2			2	4
Ընթացիկ ստուգում						4
Ամփոփիչ ստուգում						8
Ընդամենը						120